

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-533-23.05.2014-ԳԿ-010/0 և Պ-533՝-23.05.2014-ԳԿ-010/0) վերաբերյալ:

Օրենքների նախագծերի փաթեթն սկզբունքորեն ընդունելի է և համապատասխանում է բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին: Միաժամանակ, հաշվի առնելով բարձրացված հարցի կարևորությունը, անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ մասնագիտական քննարկման:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության հեղինակին առաջարկում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ խնդրին համապարփակ և արդյունավետ լուծում տալու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Ներկայացնում ենք օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում դրանց կատարումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության այն որոշումը և իրավական ակտը, որոնք կընդունվեն երկամսյա ժամկետում՝

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում.

2) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1194-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրաման:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա
ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ
օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում
կարգավորման ազդեցության գնահատման**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների
նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման
ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի
և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին
ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք
ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք
ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համար ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման հավասար չափանիշների և պահանջների սահմանմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանել ընդունելության քննությունների կազմակերպման, անցկացման հավասար չափանիշներ և պահանջներ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համար:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Կրթության
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**“Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքում
փոփոխություն և լրացում կատարելու մասին” և “Կրթության մասին Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

“Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին” և “Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը կամ չընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պ-533-23.05.2014-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 5-րդ մասը « հաստատությունների» բառից հետո լրացնել « առկա եւ հեռակա ուսուցման» բառերով:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետից հանել «հեռակա ուսուցման ընդունելության եւ » բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-533՝-23.05.2014-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «եւ բարձրագույն» բառը փոխարինել «մասնագիտական» բառով:

Հոդված 2 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Անհրաժեշտությունը

1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» եւ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ներկայացումը պայմանավորված է կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության եւ ուսումնառության կազմակերպման խնդիրների կարգավորման հետ:

2.Ընթացիկ իրավիճակը եւ տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականություն

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասին եւ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշմամբ հաստատել է պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ բուհեր) ընդունելության գործընթացը:

Բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն:

Առկա ուսուցման համար ընդունելության քննությունները՝ միասնական, կենտրոնացված ,կազմակերպում եւ անցկացնում է «Գնահատման եւ թեստավորման կենտրոն» պետական ոչ առետրային կազմակերպությունը (ԳԻԿ):

Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննությունը հանձնում են միեւնույն օրը: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու եւ հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն) առարկաներից:

Միասնական քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական եւ լրացուցիչ: Հիմնական փուլի միասնական քննությունները տվյալ տարվա փետրվարի 1-ից մինչեւ մարտի 15-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող եւ նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների կողմից հայտագրվող եւ տվյալ տարվա հունիսին դիմորդների կողմից հանձնվող միասնական քննություններն են: Լրացուցիչ փուլի միասնական քննությունները տվյալ տարվա հունիսի 24-ից մինչեւ հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում դիմորդների կողմից հայտագրվող եւ տվյալ տարվա հուլիսին դիմորդների կողմից հանձնվող քննություններն են:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 27-ի N 753-Ն հրամանով հստատվել են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնները: Համաձայն կանոնների՝ հեռակա ուսուցման ընդունելության քննությունները կազմակերպում է բուհը: Հանրակրթական առարկաներից քննությունները համապատասխան բուհերում անցկացնում են բուհի կողմից ներկայացված եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից հաստատված առարկայական հանձնաժողովները՝ առկա ուսուցման առարկայական ծրագրերով եւ գիտելիքների գնահատման չափանիշներով, իսկ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի եւ ճարտարապետության մասնագիտությունների քննություններն անց են կացվում տվյալ բուհի մշակած եւ նախարարի հաստատած մասնագիտական ծրագրերով եւ գնահատման չափանիշներով:

Հեռակա ուսուցման համար քննությունների քանակը սահմանվում է երկու մրցութային քննությունից ոչ պակաս: Դիմորդները կարող են պահպանել տվյալ տարվա մի շարք առարկաների միասնական քննության եւ կենտրոնացված համակարգով հանձնած քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ:

3.Կարգավորման նպատակը եւ բնույթը

Օրենսդրական նախաձեռնության նպատակն է կրթական ոլորտում միասնական պետական քաղաքականություն, կրթության բնագավառում պետական քաղաքականության միասնական չափանիշներ ունենալը, բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության պայմանների ու պահանջների հավասար դաշտ ապահովելը, ինչը կնպաստի կրթության բնագավառում իրականացվող կրթական գործունեության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը՝ էապես բարձրացնելով մասնագիտական կրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման արդյունավետությունը:

4.Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է բարձրագույն ուսումնական հաստատություններ բակալավրի կրթական ծրագրով առկա եւ հեռակա ուսուցման համար ընդունելության քննությունների կազմակերպման, անցկացման հավասար չափանիշների եւ պահանջների սահմանում՝ապահովելով կրթության բնագավառի համար գերխնդրի՝ կրթության որակի բարձրացումը, միասնական համակարգի արդյունավետ գործունեությունը: